



05/157d3-18  
1/17. d/11836-18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

№ 1041

«15» 10 2018 թ.

ք.Երևան

**ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԿՈՉՈՒՄ  
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով, 26-րդ հոդվածի 1-ին մասով, 31-րդ հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածի 12-րդ մասի «ա» կետով, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 17-ի N 1654-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 7-րդ կետով և Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 740-Լ որոշմամբ հաստատված արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության (այսուհետ՝ ԱԻՆ) 18-րդ կետի 29-րդ և 30-րդ ենթակետերով.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. ՀՀ ոստիկանությունից տեղափոխված ոստիկանության մայոր Արմեն Հրաչիկի Գրիգորյանին՝ 2018 թվականի հոկտեմբերի 22-ից ընդգրկել ՀՀ ԱԻՆ փրկարարական ծառայության բարձրագույն խմբի պաշտոնների ցուցակներում:
2. Ոստիկանության մայոր Արմեն Հրաչիկի Գրիգորյանին նշանակել ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի պաշտոնին՝ համաձայն պայմանագրի, շնորհելով «փրկարարական ծառայության փոխգնդապետ» կոչում:
3. Ծառայությունը ՀՀ ոստիկանությունում օրացուցային հաշվարկով կազմում է 17 տարի 01 ամիս 19 օր:
4. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ֆ. ՅՈՒՆԱԿՅԱՆ